

Լորի Տէմիրբեան (11րդ)

Բառեր՝ 1115

### Կրթութեան Անհրաժեշտութիւնը

Կ'ըսուի թէ կրթութիւնը մեծագոր գէնքն է, որ աշխարհը փոխելու կարողութիւնը ունի: Աշխարհի տարբեր զարգացած երկիրներու համար, այս գաղափարը շատ ճիշդ է: Ուսումնասիրական ոլորտին մէջ գործածելու քանակով հաւաքած տեղեկութիւններէն եւ գիտելիքներէն գատ, ուսանողներ կը քաջալերուին հմտութիւններ եւ արժէքներ ընդունիլ, որոնք շատ կարեւոր են ներկայիս ընկերութեան մէջ: Կրթութիւնը աշակերտին ուղեղը կը գրգռէ որպէսզի կարենայ լուծել աշխարհի իրական խնդիրները, ըլլան անոնք պարզ կամ խրթին հարցեր: Կրթական համակարգեր մարդկային ստեղծագործութիւնը կը դրդեն, որպէսզի ընկերութեան զարգացման եւ բարելաման տեղ բացուի եւ կարողութիւնը տայ յառաջանալու, որով տարբեր մտածելակերպերու ստեղծումը կը մղէ, որպէսզի անձը կարենայ իրավիճակ մը տարբեր կերպով ըմբռնել, որ յետագային կրնայ օգտակար ըլլալ խնդիրները դիւրաւ լուծելու ընթացակարգին: Սակայն, զարգացող եւ աւելի քիչ զարգացած երկիրներու կրթութիւնը տարբեր է համեմատելով Ամերիկայի Միացեալ Նահանգներուն հետ: Կարգ մը, նուազ զարգացած երկիրներու կրթութեան պակասը պայմանաւորուած է բազմաթիւ ազդակներով, ըլլան անոնք սեռային անարդարութիւն, լեզուական խոչընդոտներ եւ կամ ելեւմտական անկայունութիւններ: Հայաստանը, որ ներկայիս զարգացող երկիր է, ունի կարգ մը կրթութեան անբաւականութիւններ: Կրթութիւնը մեծ դեր կը խաղայ Հայաստանի եւ Արցախի վերականգման, զարգացման եւ բարելաման աշխատանքին: Զարգացած երկիր դառնալու եւ կրթութեան որակն ու հանգամանքը բարձրացնելու համար, ուսուցման աւանդական ոճէն պէտք է անցնիլ, այլ աւելի ժամանակակից մօտեցումին:

Ինչն՞ու հայկական կրթութիւնը իր հիմնական բաղկացուցիչները չունի այսօր: Այս միտքը հասկնալու համար, նախ պէտք է հասկնալ, թէ ներկայ կրթութեան ձեւերը, ինչն՞ու չեն գործած եւ անոր տակ պահուած նպաստած ազդակները: Արցախեան պատերազմէն տարի մը առաջ, կրթութիւնը նշանակալից հարց էր ժողովուրդին միջեւ եւ վիճաբանութեան առաջ կանգնած էր: Այդ ժամանակին, կրթութեան նախարար՝ Արայիկ

Յարութիւնեան բարեկարգութիւններ մշակեց: Այս բարեկարգութիւնները համարլսարաններուն իրաւունք եւ ազատութիւն տուաւ, որ կարգ մը դասարաններու պահանջներն ու պայմանները նուազեցնէ: Սոյն դասարաններն էին՝ հայոց լեզու, գրականութիւն եւ պատմութիւն: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդական շարքերուն կողմէ բարկութիւն յռաջացաւ, որոնք նախարարին հրաժարումը պահանջեցին: Ներկայիս, հայ ժողովուրդը բոլորովին ցնցուեցաւ ապրելով արցախեան պատերազմի բերած աշխարհագրական եւ տարածքային կորուստները: Այս պատճառով է, որ Հայաստանի հանրութիւնը իր ուշադրութիւնը շեղեց եւ խոտորեցուց կրթութեան նիւթէն: Հասկնալի է, որովհետեւ երկիրը խոցելի իրավիճակի մէջ կը գտնուի: Հայաստանի ժողովուրդը եւ սփիւռքը միասին կը փորձեն պայքարիլ, որպէսզի երկիրը կարենայ կրկին ոտքի հանել: Բայց կրթութեան հարցը, այժմ պէտք է շատ աւելի կարեւոր ըլլայ քան նախկին տարիներուն, եւ որպէսզի կրթութեան մակարդակը կարենայ զարգանալ, նախ պէտք է հասկնալ, թէ ինչպիսի՞ մտածելակերպով կ'ընդհանայ կրթական համակարգը: Ծնած օրէն իսկ, հայ մանուկը կը սորվի, թէ հայրենասէր եւ ազգասէր ըլլալը իր հայրենիքին, ազգին եւ մշակոյթին հանդէպ ամենայ կարեւոր միջնորդն է Հայաստանի եւ Արցախի գոյատեւման: Այս շատ յստակ հաստատում է, որովհետեւ առանց ազգին հանդէպ մեծ սիրոյն եւ կապուածութեան, կարելի չէր մինջեւ այսօր հայրենիք ունենալ: Սակայն այսօր կը պակասի՝ քաղաքական դիրքորոշումն ու հայրենասէր իշխանութիւնը ...: Հայրենասիրութեան զգացում, հարուստ մշակոյթ եւ ժառանգութիւն ունենալը միայն, բաւարար չեն երկրի գոյատեւման համար: Հայրենասիրութիւնն ու քաղաքական առողջ դիրքն ու հաստատակամութիւնը ձեռք ձեռքի պէտք է գործեն: Քաղաքականութեան եւ պետականութեան բնոյթը երբէք նշանակալից դեր եւ ազդեցութիւն չէ ունեցած Հայաստանի եւ իր հանրութեան մէջ: Այս կը պայմանաւորուի Ռուսաստանի եւ Սովետական Միութեան ազդեցութեան եւ ներկայութեան յարատեւ: Նախքան Հայաստանը անկախ պետութիւն դառնալը, այս արտաքին պետութիւնները դեկավարեցին երկիրը, պատասխանատուութիւն առնելով անոր քաղաքական դիրքին եւ վեհապետութեան համար, չնայած իրենց ճշմարիտ ռազմավարութեան: Իրենք էին, որ տասնամեակներ շարունակ իշխեցին եւ վերահսկեցին Հայաստանը: Այս պատճառով մինչեւ օրս վտանգաւոր սպառնալիքի տակ պահեցին գայն:

Հայաստանը յաճախ արտաքին կամ օտար դաճնակիցներու օգնութիւնը նաեւ կ'ակնկալէ: Այդ ժամանակաշրջանին հայ ժողովուրդը միայն կարողացաւ իրենց արուեստը եւ մշակոյթը պահպանել, եւ այն ժամանակն էր երբ նշանաւոր գրողներ եւ բանաստեղծներ մէջտեղ եկան: Մշակութային գործիչներն էին, որ հայ ժողովուրդին քաջալերեցին գոնուած դժուարութեան եւ տառապանքին մէջ: Ինչն<sup>օ</sup>ւ հայ ուսանողը, մանաւանդ սփիւռքի մէջ, աւելի ազգային եւ մշակութային գործիչներու մասին կը սորվի. Որովհետեւ ճիշտը իշխող ուժի պատճառով երբէք յայտնի քաղաքական դեկավար չէ եղած:

Հայրենասիրութեան երկու տեսակը կայ՝ զգացական հայրենասիրութիւն եւ գործողութեան հայրենասիրութիւն: Զգացական հայրենասիրութիւնը ստեղծուեցաւ եւ զարգացաւ որովհետեւ հայ ժողովուրդը ստիպուած էր առանց հայկական վեհապետութեան ապրիլ: Այս տեսակը ունի ետ հարգատ հայրենիք վերադառնալու երազը: Ըստ Գէորգ Էմինի բառերով՝ «Կանչիր բոլոր պանդուխտներին ու է՛տ դարձիր, բարով դառնա»: Այսպիսի եւ այլ գրական գործեր հայ ժողովուրդին քաջալերեց եւ յոյս տուաւ տառապանքի ընթացքին: Հայոց լեզուն, հաւատքը եւ մշակոյթը պահպանելը շատ կարեւոր է: Այս գաղափարով է որ զինուորներ եւ ազատամարտիկներ զգացած են որ իրենց պարտականութիւնն է հայրենիքը պաշտպանել: Այս գաղափարով է որ անոնք պատրաստ են իրենց կեանքը վտանգի մէջ դնել եւ, ի վերջոյ, ինքզինք գոհաբերել յանուն հայրենիքի եւ ժողովուրդի: Զգացական հայրենասիրութիւնն էր որ հայ ժողովուրդին մղելու ուժը տուաւ որ Հայաստանի եւ Արցախի միութիւնը պահանջէն Սովետ տարիներուն: Այս տեսակ հայրենասիրութիւնը ներկայիս մեր միտքը կը տիրապետէ, մանաւանդ այսօրուայ վիճակին մէջ: Երկրորդ տեսակն է գործողութեան հայրենասիրութիւնը, որը գոյութիւն ունի միայն կայուն վեհապետութիւն հաստատելու խրախուսման համար: Երկու տեսակները երբեք իրար հետ գոյութիւն չ'ունին հայկական ընկերութեան մէջ: Կամ մէկ հատն է, կամ միւսը: Անկախ հայրենիք եւ պետութիւն ունենալու երազանքը դժուար է որովհետեւ անոր հետ կու գայ հսկայական պատասխանատուութիւն: Այդ պատճառով կրնայ ըլլալ որ հայը զգացական հայրենասիրութեան կը կառչի քան գործողութեան հայրենասիրութեան: Այս տեսակ հայրենասիրութիւնը միայն բացայայտ կ'ըլլայ սպառնական դէպքերու պահին, երբ հանրութիւնը նկատի

կ'առնէ անոր կարեւորութիւնը գոյատեւման համար: Եթէ վտանգ չկայ, ժողովուրդը աշխատանք չի տանիր կառավարութեան կարգավիճակը զարգացնելու համար: Գործողութեան հայրենասիրութիւնը բացակայ ըլլալով, Հայաստան վեհապետութիւն հիմնելու առիթը չէ ունեցած: Վեհապետութեան բացակայութիւնը Հայաստանի տկարութեան պատճառն է: Ապացոյցներ կան որ կրնան վկայել այս տեսակի պետութեան պակասութեան: Անոնք կ'ըլլան ապակհանիչ դեկավարներն ու առաջնորդները որ միայն անձնական շահի նպատակով կը գործեն, անվարութիւն եւ անհագութիւն ցոյց կու տան ժողովուրդին պահանջածներուն, եւ ընդհանուր քաղաքական վիճաբանութիւն: Փոփոխութիւն անհրաժեշտ է որպէսզի անցնիլ դէպի բարելաման եւ զարգացման:

Փոփոխութիւն կարելի է տեսնել միայն երիտասարդ սերունդներու աչքերուն մէջ: Նոր եւ պատանի սերունդները անհրաժեշտ են որպէսզի կարենան քաղաքական դիրքն ու կարգավիճակը փոխեն դէպի աւելի լաւը: Այս սերունդի երիտասարդները հայ դատին նուիրուած պէտք է ըլլան եւ վեհական նայուածքով դէպի դժուարութեան պէտք է նային որպէսզի կարենան ապագայի համար յստակ եւ պայծառ տեսիլք մը ունենան: Այսպիսի սերունդ մը ոգեւորելու համար, Հայաստանի կրթութեան համարկարգին բարեփոխումներ եւ նորոգութիւններ է պէտք: Ուսանողներ պէտք է սորվին եւ սերտեն Հայաստանի պատմութեան մասին, ինչպէս նաեւ այլ ազգերու նման պատմութիւնները որպէսզի հասկնան, գիտակցին եւ դատեն անոնց սխալ ըրածները: Այսպիսով, կարելի է զգուշանալ եւ քաշուիլ նոյնանման վրիպակներէ, եւ յաջող ծրագիր մը ստեղծել հայրենիքին համար: Բայց այսպիսի ուսումնասիրութիւն գոց սորվելէ անդին պէտք է երթայ: Որոշ թուականներ եւ դէպքեր գոց սորվիլը օգուտ չ'ունի, ուրեմն աշակերտը այդ դէպքերուն կարեւորութիւնը պէտք է հանչնայ եւ հասկնայ: Այս անհրաժեշտ կը դառնայ վեհապետութեան հաստատման աշխատանքի ընթացքին: Քաղաքային վարչապետութեան դասընթացքներ պէտք է տրուի որպէսզի ուսանողները կարգ մը նիւթերու մասին սորվին: Այսպիսի նիւթերը կրնան ըլլալ՝ սահմանադրական իրաւունքներ, քաղաքացիական պատասխանատուութիւն, զինուորական ծառայութեան եւ դատական կազմի դերը, եւ ընդհանուր կառավարութեան մասին: Կրթութեան համակարգը պէտք է ընկերութեան հարցերը մատնանել որպէսզի

երիտասարդությունը անոր հանչնայ եւ փորձառություն ստանայ: Աւանդական գոց սարվելէն հեռանալու եւ աւելի ստեղծագործ ուսուցման աշխատանքին անցնելու համար, աշակերտներուն ազատ շրջապատ է պէտք, ուր փորձառական ուսում կրնան ստանալ: Այսպիսի ուսում աշակերտին թոյլ կու տայ որ կարենայ քննադատօրէն մտքեր ստեղծել, վախերը յախթահարել եւ անսահման մտածումներ արտայայտել: Որպէսզի Հայաստանն ու Արցախը նորէն ոտքի ելլեն եւ կանգուն մնան, կրթությունը հարկաւոր է: Կրթությունը պէտք է փոփոխություններէ անցնի որպէսզի մտաւորական սերունդ մը մեծնայ, եւ ի վերջոյ երկիրը բարեւաւէ: Այս համակարգներուն ամրապնդումը շատ կարեւոր է զարգացող երկրի մը ճակատագրին: Առանց անոր, երբէք յառաջդիմություն չ'ըլլար: Անմիջական բարեփոխում պէտք է ըլլայ, թէ ոչ ո՞վ գիտէ Հայաստան ինչպիսի բաներու կրնայ ենթարկուիլ:

## Works Cited

Azadian, Edmond. "Education Reform Hits a Snag in Armenia." The Armenian

Mirror-Spectator. Web. 13 March. 2021.

<https://mirrorspectator.com/2019/11/14/education-reform-hits-a-snag-in-armenia/>

Emin, Kevork. "Երգ Կռուկի և Մասին." Web. 15 March. 2021.

<https://grqamol.am/article/erg-krunki-masin/>

Zanoyan, Vahan. "Revisiting Culture, Education, and Statehood." The Armenian

Mirror-Spectator. Web. 13 March. 2021.

<https://mirrorspectator.com/2021/03/09/revisiting-culture-education-and-statehood/>